

7. Ընտրե՛ք 6 ճիշտ պնդում.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

ա/ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը հիմնվել է 1441 թ.:

բ/ Աղթամարի կաթողիկոսությունն ստեղծվել է 12-րդ դ. սկզբին:

գ/ Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը 14-րդ դ. վերջերից Գանձասարի վանքն է:

դ/ Շեյխ Սեֆիի կրոնական համայնքը հիմնադրվել է Իրանի Սպահան քաղաքում:

ե/ Սեֆյան տերությունը և Օսմանյան կայսրությունը 1555 թ. հաշտության պայմանագիր են կնքել Կասրե-Շիրինում:

զ/ 1590 թ. հաշտությամբ շահ Աբաս Ա-ն Օսմանյան կայսրությանը զիջել է ամբողջ Այսրկովկասը և Ատրպատականը:

է/ Ջուղայի բնակչության նկատմամբ պարսկական բանակը հաշվեհարդար տեսավ, երբ նրանք փորձեցին ընդդիմանալ շահ Աբաս Ա-ի տեղահանության հրամանին:

ը/ 17-րդ դ. առաջին կեսին զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:

թ/ Մանուել ճարտարապետը Վանում կառուցել է Արծրունիների թագավորական պալատը:

ժ/ Անիի զվարթնոցատիպ եկեղեցին կոչվում էր Ս. Գրիգոր Լուսավորիչ:

ժա/ Անիի Կաթողիկե Մայր Տաճարի պատերին պատկերված է խաղողի մշակության ամբողջ ընթացքը՝ որթի տնկումից մինչև գինու ստացումը:

ժբ/ Հայերեն առաջին տպագիր գիրքը լույս է տեսել Վենետիկում:

1	2	3	4	5	6

8. Ընտրե՛ք 6 սխալ պնդում.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

ա/ Անիի աշտարակազարդ պարիսպների առաջին գիծը կառուցվել է 963-964 թթ.:

բ/ Անանիա Մոկացի կաթողիկոսին հաջողվել է հնազանդեցնել Սյունյաց և Աղվանից թեմերը:

գ/ Ատրպատականի Մամլան ամիրան երկու անգամ արշավանք է կազմակերպել Անիի թագավորության դեմ:

դ/ 1001 թ. Տայք ժամանած Վասիլ Բ-ին ներկայացած տիրակալների թվում էր Աբխազիայի թագավորը:

ե/ Տաթևի վանքին 10-րդ դ. սկզբներին պատկանում էր 22 գյուղ:

զ/ Բագրատունյաց Հայաստանի մշտական բանակը պատերազմների ժամանակ համալրվում էր՝ հասնելով 90-100 հազարի:

է/ Բագրատունի թագավորների հենարանն էր արքունական գունդը, որը համալրվում էր թագավորական տիրոջներից հավաքագրված ռամիկներից:

ը/ 1054 թ. Կարսի պաշարման ժամանակ Թաթուլ անունով մի երիտասարդ ծանր վիրավորել է սելջուկյան առաջնորդ Տուղրիլին:

թ/ 1064 թ. Ալի Արսլանն Անին գրավելուց հետո ասպատակել է Լոռին:

ժ/ Սելջուկյան երրորդ արշավանքի ժամանակ բյուզանդա-հայ-վրացական համատեղ ուժերը Բասենի ճակատամարտում փորձեցին կանգնեցնել նրանց:

ժա/ Չաքարյան եղբայրները 1194 թ. ազատագրել են Արագածի լանջին կառուցված Ամբերդ ամրոցը:

ժբ/ 1259 թ. բռնկված հակամոնղոլական ապստամբության պատճառը հարկերի բարձրացումն ու հայ-վրացական ջոկատների՝ Իկոնիայի դեմ պատերազմի ուղարկելու որոշումն էին:

1	2	3	4	5	6

9. Գտե՛ք 3 սխալ պնդումներ և ուղղե՛ք դրանք.

1,5 մ. (3 X (0,25+0,25) մ.)

ա/ 1930 թ. մահացավ Գևորգ Ե կաթողիկոսը, և նույն տարում կաթողիկոս ընտրվեց Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանը:

բ/ 1936 թ. դեկտեմբերի 5-ին ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ համագումարում ընդունվեց պետության նոր սահմանադրությունը, որով Անդրդաշնությունը լուծարվում էր, և Խորհրդային Հայաստանը վերածվում էր միութենական հանրապետության:

գ/ Հայրենական մեծ պատերազմում հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ է մեկնել 390-րդ դիվիզիան, որը 1942 թ. մարտի սկզբներին մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին և ունեցել ծանր կորուստներ:

դ/ Լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը արժանացել է ԱՄՆ հերոսի՝ «Կոնգրեսի պատվո մեդալի» շքանշանի, որով Երկրորդ աշխարհամարտի տարիներին պարգևատրվել է ընդամենը ամերիկյան 87 զինվորական:

ե/ 1945 թ. ապրիլի 19-ին ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ի. Ստալինը Կրեմլում ընդունել է Գևորգ Զ-ին և պարգևատրել նրան «Կովկասի պաշտպանության համար» մեդալով:

զ/ 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում ելույթ են ունեցել 110 պատգավորներ:

է/ 1953 թ. մայիսի 30-ին ԽՍՀՄ կառավարությունը պաշտոնապես հայտարարել է, որ ոչ մի տարածքային պահանջ չունի Թուրքիայի նկատմամբ:

	Սխալ պնդումը	Ուղղված ձևակերպումը
1		
2		
3		

10. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» տարբերակներից մեկը:

ա/ Արդեն 9-րդ դ. տաճարային և վանական դպրոցների հիման վրա ձևավորվում էին նոր տիպի դպրոցներ՝ վարդապետարաններ:

բ/ Կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների հիմնած հոգևոր-մշակութային կենտրոններից էին Ծործորի և Քոբայրի դպրոցները:

գ/ Սանահինի և Հաղպատի վարդապետարաններում իրենց գիտամանկավարժական գործունեությունն են անցկացրել ժամանակի նշանավոր գործիչներ Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին և Թովմա Արծրունին:

դ/ Սկևռայի դպրոցը, որտեղ դասավանդվող առարկաների շարքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում մանրանկարչությունը, երաժշտությունը և գրչության արվեստը, հիմնադրել է Ներսես Մշեցին:

ե/ Նարեկի վարդապետարանն իր զարգացման բարձրակետին է հասել աշխարհահռչակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ուսուցչապետության տարիներին:

զ/ Սսի համալսարանում էին կրթություն ստանում Կիլիկյան Հայաստանի պետական գործիչները և գիտության նվիրյալները, ինչպես նաև Զաքարյան իշխանական ընտանիքի անդամները:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Զգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Զգիտեմ						

11. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը:

ա/ Հ. Արղությանի և Հ. Լազարյանի ծրագրի համաձայն՝ նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ստրկացնելու իրավունքի:

բ/ Հնդկահայերը, ոգևորված Հովսեփ Էմինի քարոզչությունից, որոշում են Հայաստանի ազատագրման նպատակով բանակ ստեղծելու համար նրան տրամադրել 12 հազար ռուբլի, իսկ մեծահարուստ Գրիգոր Խոջաջանյանը համաձայնվում է այդ գործի համար կտակել իր ունեցվածքի մեկ երրորդը, եթե կաթողիկոս Սիմեոն Երևանցին տա իր համաձայնությունը:

գ/ Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրի համաձայն՝ Արցախի մեղիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:

դ/ Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագրի համաձայն՝ առաջարկվում էր Սև ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:

